



ԿՐՈՆԱԳԻՏԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ՎՐԴ. ՉԻՖԹԾԵԱՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴԸ ԴԷՄ ԱՌ ԴԷՄ

ԻՆՉՈՐԻ Է ՆՆՋԵՑԵԼՈՑ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏԸ

Հիմ ժամանակներէն միմչև այսօր շատեր հարց տուած են ու տակաւին կը շարունակեն տալ, թէ Իմչո՞ւ հոգեհամգիստ կը կատարենք: Առանց մկատի ունենալու կրօնական դաստիարակութեան ամոնց՝ ունեցած ենթահողը, եկեղեցական կանոններու ըմբռնում չունեցողն ու հաւատացեալ մարդը մոյմ հարցումը կրնան ուղղել: Ամշուշտ իրենց մկատողութեան մէջ կը տարբերին երկու տեսակի հարցադրողները, սակայն հարցումը գրեթէ մոյմն է բովանդակութեան իմաստով. «Իմչո՞ւ է հոգեհամգիստը, երբ ամձը իր կեանքը այս կամ այն ձևով ապրած է ու մանաւանդ՝ այժմ մեռած»:

Ամմահութեան գաղափարը մախաբրիստոնէական հիմք ունի, իմչպէս պատմութիւնը կը վկայէ, և հմախուզութիւնը կը հաստատէ՝ ցոյց տալով հիմ մարդոց հաւատալիքները մեռած անձերու վերստին ողջացման մասին: Հիմ եգիպտացիներ և այլ ցեղեր մեռնող անձին հետ թաղած են ոչ միայն իր գոյքերը իբրև յիշատակ, այլ մոյմիսկ իր զէնքերը՝ գործածութեան համար...: Քրիստոնէութիւնը ամմահութեան գաղափարին տուաւ մոր տարազատրում մը՝ լուսաւորելով այն խաւարը, որ դարերով պատած էր մարդկային միտքը անդենական կեանքին մասին: Քրիստոնէութեան այս ըմբռնումն էր, որ հաւատացեալներու մտքին մէջ շեշտադրեց այն իսկական յարգանքը, որ մերկայիս ունիմք մեր մնջեցեալներու յիշատակին մկատ-

տուծոյ. «Ով Տէր Աստուած, քու օծեալէդ երես մի՛ դարձներ, և քու ողորմութեամբդ յիշէ՛ քու ծառադ՝ Դաւիթը» (Բ. Մնաց., Զ. 42): Երբայեցիներ անդիսկ ծոմ կը պահէին մեղքեցեալներու յիշատակին, իբրև սուգ: Սատուի համար Գաղաթի Յարիսի բնակիչները եօթ օր ծոմ կը պահեն (Ա. Թագ., ԼԱ. 13):

Մայրենի մեր Եկեղեցին մեղքեցեալներու ընծայուած անօթքը կը կատարէ՝ խնդրելով Աստուծմէ՝ ներել անոնց ներելի և անցիտակցաբար գործած լանցանքները: Հոգեհամզատեան այս անօթքը առնչութիւն չունի անշուշտ Հոռմի Կաթողիկ Եկեղեցւոյ 7-րդ դարու վերջաւորութեան բանաձևած «Քաւարան»-ի վարդապետութեան հետ: Սոյն վարդապետութեան համաձայն, մարմինէն զատուած հոգին անմիջապէս կը դատուի իր գործերուն համաձայն և կ'անցնի արքայութիւն կամ կ'ողորմութիւն դժոխք: Իսկ եթէ փոքր մեղքեր ունի և չէ կրցած քաւել զանոնք իր կեանքի ընթացքին, Քաւարանի մէջ կը մնայ և ի վերջոյ արդարացած ու սրբուած կ'անցնի արքայութիւն: Ասոր պիտի յաջորդէ անշուշտ Վերջին Դատաստանը:

Մասնակի այս դատաստանը չէ ընդունուած Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ կողմէ և անոր փոխարէն, Տիեզերական առաջին երեք ժողովներու ոգիով, մեր Եկեղեցին կը հաւատայ միայն Վերջին Դատաստանին: Մինչ այդ, մեղքեցելոց հոգիները կ'երթան տեղ մը, որ մեր աստուածաբանութեան մէջ կը կոչուի «Հոգիներու Կայան», ուր կը սպասեն անոնք միմէն Վերջին Դատաստան: Արդարեւորում հոգիները միախառն կը հրճուին ապագայ երանութեան տեսիլքով, իսկ մեղաւորներուն հոգիները՝ ապագայ տանջանքի սարսափով:

Թէ մեր հոգեհամզատեան անօթքը տարբեր մօտեցում ունի՝ ասոր փաստը կարելի է գտնել մահ մեր Պատարագին մէջ: Պատարագիչ քահանան այնպիսի մեղքեցեալներու համար կ'անօթէ իր ծածուկ անօթքներուն մէջ, որոնցմէ մի քանիսն սրբութիւնը և արդարութիւնը Ս. Գիրքով հաստատուած են արդէն: Այսպէս, «Աստուածածնին Սրբոյ կուսին Մարիամու և Յովհաննու Մկրտչին, Սրբոյն Ստեփանոսի Նախավկային...» և դպրաց դասը եկեղեցիին փոխարէն կ'երգէ. «Յիշեա՛, Տէր, և ողորմեա՛: Կրնա՞նք ըսել, թէ Ս. Աստուածածնի հոգին այսինչ կամ այնինչ տեղ է, կամ արդարացա՞ծ է, թէ ոչ: Բնական է, որ արդար է: Բայց և այնպէս տակաւին կ'անօթենք անոնց հոգիին համար: Ուրեմն, հոգեհամզատեան պաշտօնը Աստուծոյ ուղղութեամբ գոյթ հայցելու անօթք մըն է մեր բոլոր մեղքեցեալներուն հոգիներուն համար և ոչ թէ միայն մեղաւորներուն կամ քաւելու ընթացքի մէջ եղողներու համար: Մեր հայրերու գրած հանգստեան շարականն ալ ընդհանուր գոյթ հայցելու անօթք մըն է կ'արտայայտէ. «Գթա՛, Տէր, մեր մեղքեցեալներու հոգիներուն, և քու ողորմութեամբդ յիշէ զանոնք, որովհետեւ քու սուրբ արեանդ գինն ենք...» (Ծարական):

Ներկայիս այս արարողութիւնը՝ հոգեհամզատեան պաշտօնը, մեղքեցեալին համար անօթք մատուցելէ աւելի անոր պարագաները յարգելու ձևականութեան ճամբուն մէջ մտած է: Այնքան մը, որ անդիսկ եկեղեցւոյ մէջ բարեպաշտներու ներկայութեան քանակը կարելի է ճշդել հոգեհամզատի համար կատարուած խնդրանքներու թիւէն դատելով...

Տարօրինակ է նույնիսկ լսել, որ ոմանք հոգեհամգիստ ըսելով կը հասկընան հոգեհաշը միայն: Ընաշարաններու սրահներում մէջ կատարուող «հոգեհամգիստ-ներու» մասին կ'իմանանք, որոնք նույնիսկ, առանց առաւօտում եկեղեցւոյ մէջ կատարուած հոգեհամգստեան պաշտօնին, և ոչ ալ տեղւոյն վրայ մըմունջ մը աղօթքի՝ սոսկ կերակուրով և խմիչքով կը կատարուին... Հոգեհամգիստը կերակուր ըլլալէ առաջ և վեր, ԱՂՕՊ-Բ է: Իսկ այդ աղօթքը մեր քրիստոնէական պարտականութիւնն է՝ ամբողջ եկեղեցւոյ համար կատարուած:

Յարգէ՛ մնչեցեալներդ աղօթքով, որպէսզի անոնք ալ քեզի համար բարեխօս ըլլան Աստուծոյ՝ Արդար Դատաւորին մօտ:

